յուրօրինակությունների մասին, ապա մյուս կողմից՝ կարևոր է նույն ժամանակաշրջանի հայ պատմագրության մեջ թղթօգտագործման սկզբունքները որոշարկելու առումով:

Ներժանրային բազմազանությամբ հանդերձ՝ թղթի որոշ կառուցվածքային միավորներ ընդհանրական-կայուն են, և դրանց առկայությունից կամ բացակայությունից ելնելով կարելի է եզրակացնել՝ պատմիչը տվյալ թուղթն ամբողջությա՞մբ, թե՞ հատվածաբար է ներբերել, երկրորդի պարագային երբեմն նաև՝ հատկապես ո՞ր հատվածը: Մասնավորապես՝ Դավրիժեցու պատմագրքում ընդմիջարկված թղթերի մեծ մասում ժանրի կառուցվածքային կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ ***թղթառաջքի*** բացակայությունն իր հիմնական բանաձևային կիրարկումներով՝ ««Այսինչը այնինչին ողջույն»՝ զուգորդված նամակագրին և հասցեատիրոջը տրվող պատվանուններով, տիտղոսներով և աստծո ամենազորության կամ ներկայության վկայակոչումներով»[6], վկայում է, որ այդ թղթերն ամբողջական չեն ներբերվել: Մանավանդ որ՝ թղթառաջքը ամենակայուն նամակային միավորն է դիտվում հայ պատմագրության մեջ[7]: Այսպես, օրինակ, Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսների՝ Սրապիոն վարդապետին[8] ուղարկած նամակում թղթառաջքը բացակայում է: Իսկ ահա թղթային մյուս կայուն միավորի՝ ***թղթավերջի*** առկայությունը՝ «Արդ խնդրեմք ի քէն մի՛ անփոյթ առնիցես գալ ի փրկութիւն մեր, և մանաւանդ ի վերականգնումն ծեր և հոգևոր ծնողին քում սրբոյ աթոռոյն Էջմիածնի» (էջ 60)[9],

---

6 Տե՛ս նույն տեղը, էջ 22:

7 Նույն տեղում:

8 Հիշված և այսուհետ հիշվող անձնավորությունները, բնականաբար, իրական-պատմական դեմքեր են, որոնք երբեմն առնվազն համառոտ ներկայացվելու չափ անծանոթ են ընթերցողին: Աշխատությունը չծանրաբեռնելու և բուն նյութից չշեղվելու համար զերծ ենք մնում այդ անձանց մասին թեկուզև հպանցիկ տվյալներ հիշատակելուց:

9 ***Առաքել Դաւրիժեցի***, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990: Այս գրքից